Թամարա Մինասյան

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՎՌԱՑՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Բանալի բառեր՝ *Գրիգոր վարդապետ Սկևռացի, Գևորգ Սկևռացի, հեղինակային ինքնություն, Գրիգոր Մլիճեցի, Լևոն Բ, Հեթում Ա, քերական, կենսագրական տեղեկություններ*

ԺԳ դարի մատենագիր, հասարակական-քաղաքական և եկեղեցական գործիչ Գրիգոր վարդապետ Սկևռացին այն հեղինակներից է, ում կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությունը կանգնեցնում է միջնադարյան այնպիսի բարդ ու խճճված խնդրի առաջ, ինչպիսին նույնանուն հեղինակների ինքնության, ապրած ժամանակի, նույն անուններով մեզ հասած երկերի հեղինակային պատկանելության հարցերն են:

Հայագիտության մեջ Գրիգոր Սկևռացու մասին անդրանիկ խոսքը պատկանում է Մ. Չամչյանին[1]: Ապա Սկևռացուն տարբեր առիթներով անդրադարձել են Ղ. Ալիշանը[2], Գ. Զարբհանալյանը[3], Բ. Սարգիսյանը[4], Նոր Հայկազյան բառարանի հեղինակները[5], Մ. Օրմանյանը[6], Ա. Զամինյանը[7], Ե. Դուրյանը[8], Հ. Աճառյանը[9], Կ. վարդապետ Քիպարյանը[10], Հ. Ոսկյանը[11], Ն. Պողարյանը[12], Գ. Ավետիքյանը[13], Գ. Հակոբյանը[14], Ն. Ակինյանը[15],

---

[1] Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 168:

[2] Ալիշան Ղ., Սիսուան, էջ 99-101, 515, 518, 524, 527, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 441:

[3] Զարբհանալեան Գ., Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 715-718:

[4] Սարգիսեան Բ., Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907, էջ ՃԾԳ-ՃԾԹ:

[5] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, էջ 10-11:

[6] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, մաս Գ, Պէրութ, 1959, էջ 1596, հ. Բ, մաս Ա, Պէրութ, 1960, էջ 1601:

[7] Զամինեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջևան, 1908, էջ 281, նույնի՝ Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջևան, 1914, էջ 194:

[8] Դուրեան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 233-234:

[9] Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 570:

[10] Քիպարեան Կ. վրդ., Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 459:

[11] Ոսկեան Հ., Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 1-92:

[12] Պողարեան Ն., Հայ գրողներ (Ե-ԺԷ դդ.), Երուսաղէմ, 1971, էջ 272:

[13] Ավետիքեան Գ., Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814 , էջ 412-419:

[14] Հակոբյան Գ., Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 8, 46, 47, 50, 55, 67 և այլն, նույնի՝ Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Երևան, 1980, էջ 256, Սկևռայի գրական-մշակութային դպրոցը, Երևան, 1988, էջ 34-35, 38-47, 68-81:

[15] Ակինեան Ն., Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 17, 25, 70, 74, 84, 85 և այլն:

Ս. Սաատեթյանը[16], Պ. Խաչատրյանը[17], Հ. Թամրազյանը[18], Հ. Միրզոյանը[19], Թ. Տասնապետյանը[20], Վ. Սաֆարյանը[21], Հ. Քոսեյանը[22], Վ. Եղիազարյանը[23], Թ. Մինասյանը[24], ԺԹ դարի ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուան[25]:

Գրիգոր Սկևռացու գրական ժառանգության հարցերում հայագիտության մեջ կան տարակարծություններ: Նրա երկերը վերագրվել են Գրիգոր Նարեկացուն (ավելի հաճախ), ով միջնադարում մեծագույն հեղինակություն էր, Գրիգոր Մեծ և Փոքր Վկայասերներին, Գրիգոր Մլիճեցուն, ուստի շփոթվել են նաև կենսագրական որոշ տվյալներ: Մեր նյութի շրջանակներից դուրս է Գրիգոր Սկևռացու երկերի հեղինակային պատկանելության խնդիրներին անդրադառնալը, ուստի կքննենք միայն նրա կենսագրության հետ կապված վիճահարույց մի քանի դրվագներ:

Գրիգոր Սկևռացու գրական, հասարակական և հոգևոր գործունեությունը

---

[16] Սաատեթեան Ս., Ներսէս Լամբրոնացի, Անթիլիաս-Լիբանան, 1981, էջ 14, 22, 26, 56 և այլն:

[17] Խաչատրյան Պ., Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 137, նաև Խաչատրեան Պ., Հայ հին գրականութեան մատենագիտութիւն, Ե., 2016, էջ 110-112:

[18] Թամրազյան Հ., Գրիգոր Նարեկացին և նոր պլատոնականությունը, էջ 397-401:

[19] Միրզոյան Հ., Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, N 1, էջ 111, ծնթ.:

[20] Տասնապետեան Թ., Տիրամայրը, Լիզբոն, 1998, էջ 12, 26, նաև Տասնապետեան Թ., Գրիգոր Նարեկացիէն վերափոխման ներբող (Գ) Գրիգոր Սկեւռացիի անուան տակ, Հասկ, Անթիլիաս, 2003, թ. 8-9, 584-589:

[21] Սաֆարյան Վ., Կիլիկյան Հայաստանի գրականությունը, Երևան, 1990, էջ 55:

[22] Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Հ. Քոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 447: Տե՛ս նաև «Գանձասար» մատենաշար, Երևան, 1992, Հ. Քոսեյանի նախաբանը:

[23] Եղիազարյան Վ., Գր. Նարեկացին և հայ գրականությունը 10-րդ դարում, Երևան, 2018, էջ 355-371:

[24] Մինասյան Թ., Բանասիրական մի ճշգրտում Գրիգոր Սկևռացու գրական ժառանգության մեջ, ՀՊՄՀ-ի «Հայագիտական հանդես», Երևան, 2006, թ. 1 (3), էջ 54-66, նույնի՝ Վարդան դիվանադպրի ինքնության խնդրի շուրջ, «Էջմիածին», 2006, Ե, էջ 27-33, նույնի՝ Գրիգոր Սկևռացու Գրիգոր Լուսավորչին նվիրված ճառը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թ. 3 (120), էջ 142-147, նույնի՝ Գրիգոր Սկևռացին շարականագիր, ՀՊՄՀ-ի «Հայագիտական հանդես», Երևան, 2007, թ. 2 (5), էջ 76-84, նույնի՝ Գրիգոր Սկևռացու գրական ժառանգության շուրջ, ԼՀԳ, Երևան, 2007, 2 (619), էջ 92-100, նույնի՝ Գրիգոր Սկևռացու Մարիամ Աստվածածնին նվիրված ներբողը, «Էջմիածին», թ. Ա, 2014, էջ 82-92: Տե՛ս նաև Մինասյան Թ., Գրիգոր Սկևռացի, Կյանքը և գործը (ատենախոսություն, անտիպ):

[25] Langlois V., “Notice sur le couvent Arme´nien de l´ ile s. Lazare de Venise”, Venise, 1869, p. 60, տե՛ս նաև Դոլուխանյան Ա., Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 13:

համընկնում է Լևոն Բ և Հեթում Ա թագավորների տիրապետության շրջանին: Գրիգոր Սկևռացին բազմաժանր հեղինակ է: Գրել է ներբողներ, շարականներ, մեծ և փոքր ճառեր, քարոզներ, աղոթքներ, խրատներ, կատարել մեկնություններ ու թարգմանություններ: Սկևռացու առաջին գնահատողը նրա քեռորդի և աշակերտ Գևորգ Սկևռացին է: Գևորգը Գրիգորի մահվան առիթով գրված ողբում, բարձր գնահատելով նրա արժանիքները, կոչում է «քաջն ուսուցիչ՝ վարժից բանի բաբունական»[26]: Դեռևս կենդանության օրոք Գրիգոր Սկևռացին ժամանակակիցների կողմից արժանացել է «անյաղթ հռետոր», «ճարտարութեամբ զարդարեալ», «գերագով և շնորհալի վարդապետ» պատվանուններին[27]: Հետագա ուսումնասիրողները նրան անվանել են «այր իմաստուն և սրբակեաց», որը հայտնի էր իր իմաստուն խելքով և առաքինի ճգնակյաց վարքով[28], «հոչակավոր վարդապետ» և «քաջագիտակ աստվածաշնչյան գիտելիքների»[29]:

Նկատի ունենալով այն մեծ հեղինակությունը, որ վայելել է Սկևռացին կենդանության ժամանակ, պետք է ասել, որ նրա մասին պահպանված կենսագրական տեղեկությունները չափազանց քիչ են: Գրիգորը ինքնակենսագրություն չի թողել: Ժամանակակիցներից ոչ ոք չի հաղորդել գոնե նրա համառոտ վարքը, համենայն դեպս առայժմ այն մեզ հայտնի չէ: Սկևռացու ծննդյան և մահվան թվականների վերաբերյալ եղել են տարբեր կարծիքներ:

Գ. Հակոբյանը Գրիգոր Սկևռացու ծննդյան թվականը դնում է 1170-1175 թվականների ժամանակահատվածում, մահվան թվականը՝ անհայտ[30]:

Ն. եպիսկոպոս Պողարյանը կարծում է, որ Գրիգորը ծնված պետք է լինի ԺԲ դարի երկրորդ կեսին՝ հավանաբար 1150 թվականին, իսկ մահվան թվականը համարում է 1230-ը: Ն. Պողարյանը շփոթում է նաև Գրիգոր Սկևռացու և Գրիգոր Մլիճեցու որոշ կենսագրական տվյալներ՝ մատենագիր Սկևռացուն համարելով ժամանակի հեղինակավոր գրիչ և մանրանկարիչ՝ «արուեստի այդ ճիւղերը մշակած ըլլալով Վարդան գրչի և Կոստանդին մանրանկարչի առաջնորդութեամբ»[31]:

Գրիգոր Սկևռացու կյանքն ու գործունեությունն անցել է Կիլիկյան

---

[26] Մաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 353:

[27] Տաշեան Հ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 751: Պողարեան Ն., Հայ գրողներ (Ե-ԺԷ դդ.), էջ 272:

[28] Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, էջ 168:

[29] Ալիշան Ղ., Սիսուան, էջ 100:

[30] Հակոբյան Գ., Սկևռայի գրական-մշակութային դպրոցը, էջ 34:

[31] Պողարեան Ն., նշվ. աշխ., էջ 272:

Հայաստանի Լամբրոն ավանի Սկևռա մենաստանում, որտեղ նույն դարում ապրում և գործում էին երկու՝ ավագ և կրտսեր Գրիգոր Սկևռացիները՝ գրիչ և մանրանկարիչ Գրիգոր Սկևռացին և մատենագիր Գրիգոր Սկևռացին: Միևնույն ժամանակ նույն վանքում ապրելու և գործելու փաստը առիթ է տվել նույնանուն Սկևռացիների անձերի շփոթության: Ն. Ակինյանը երկու Գրիգորներին տարբերելու համար ավագին անվանում է Մլիճեցի, որովհետև երկար ժամանակ ապրել և գործել էր Մլիճա վանքում[32]: Կրտսերը Լամբրոն ավանում ծնված լինելու պատճառով հայտնի էր նաև Լամբրոնացի մականունով:

Գրիգոր Սկևռացի-Մլիճեցու անվան հետ է կապված հինգ ձեռագիր[33]: Ամենավաղ օրինակը 1173 թվականի Տիգրանակերտի Ավետարանն է, որի ծաղկազարդմանը մասնակցել են նաև մանրանկարիչներ Կոստանդինը և Վարդանը[34]: Այս Ավետարանի գտնվելու վայրը հայտնի չէ: Գրիգոր Սկևռացի-Մլիճեցին Ներսես Լամբրոնացու հրավերով Մլիճի վանքից եկել է Սկևռա և նրա պատվերով ծաղկել 1173 թվականի «Նարեկը» (ՄՄ ձեռ, 1568), որը «Մատյանի» հնագույն օրինակն է և հայ մանրանկարչության եզակի նմուշներից մեկը: Գրիգորը Ներսես Շնորհալու համար Հռոմկլայում ծաղկազարդել է մի Ավետարան, որն ավարտել է 1174 թվականին[35]: Ներսես Լամբրոնացու պատվերով 1197 թվականին Սկևռայում ավարտում է Մլիճում սկսած Ավետարանը, որը հայտնի է Սկևռայի, իսկ մինչև 1830 թվականը Լվովում պահվելու համար՝ նաև Լվովի ավետարան անունով[36]: Գրիգոր Մլիճեցու վերջին աշխատանքը 1215 թվականի Նոր Ջուղայի մագաղաթյա ավետարանն է: Այն մանրանկարչի մահվան պատճառով անավարտ է մնացել: 1216 թվականին Տարսոն քաղաքում ձեռագրի նկարազարդումն ավարտել է մի անհայտ նկարիչ: Գրիգոր Սկևռացի-Մլիճեցին մահացել է 1215 թվականին՝ խոր ծերության հասակում[37]:

Բարեբախտաբար, փրկվել ու մեզ է ավանդվել Գրիգոր Սկևռացու քեռորդի, ԺԳ դարի նշանավոր քերական, հասարակական-քաղաքական գործիչ Գևորգ Սկևռացու վարքը՝ «Պատմութիւն վարուց եւ երջանիկ եւ

---

[32] Ակինեան Ն., Սկեւռայի աւետարանը, Վիեննա, 1930, էջ 12:

[33] Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դարերում, Երևան, 1964, էջ 52-76:

[34] Der-Nersessian S., Mauscrits Armnniens illustres des XII-e, XIII-e et XIV-e siecle de la Bibliotheque des PՌrs Mikhitharistes de Venise. Paris, 1937, p. 50.

[35] Հովսեփյան Գ., նշվ. աշխ., էջ 253:

[36] Ակինեան Ն., Սկեւռայի աւետարանը, էջ 12:

[37] Մաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 99:

տիեզերալոյս ռաբունոյն Գէորգեայ ծննդեան եւ սննդեան եւ գերահրաշ կատարմանն յունվար ի ԺԱ» վերնագրով[38]: Գևորգի վարքը ամենահավաստի և առայժմ միակ ու արժեքավոր պատմական սկզբնաղբյուրն է, և Գրիգոր Սկևռացու կենսագրական որոշ չբացահայտված կողմեր լրացվում, ճշտվում ու հաստատվում են այդ աղբյուրով: Ի՞նչ է մեզ հաղորդում Գևորգի վարքը:

Անանուն վարքագիրը գրում է, որ երբ Գևորգը դարձավ հինգ տարեկան, ծնողները նրան տվեցին սովորելու քեռու՝ Սկևռա վանքի ռաբունապետ Գրիգորի մոտ, որը փայլում էր կրոնավորական ու քահանայական պատվով և տեղյակ էր գիտության Հին և Նոր Կտակարանների. «Իբրև եղև ամաց հնգից, տան զնա յուսումն աստուածային գրոց յեղբայր երանուհի մաւրն իւրոց, յընտիր ծառայն Աստուծոյ, որ կրաւնաւորական և քահանայական պատուով փայլէր և տեղեակ էր գիտութեան և վարժ և կիրթ հին և նոր կտակարանաց, որում անուն Գրիգոր»[39]: Գրիգորը հոգ է տանում Գևորգի ուսման ու կրթության համար: Իսկ երբ Գևորգը տասը տարեկան է դառնում, Գրիգորը ձեռնադրվում է Սկևռա վանքի եպիսկոպոս. «Իբրև եղև սուրբս Ժ. ամաց, Աստուծոյ կամելովն դաստիարակն իւր և ըստ մարմնոյ քեռին, յընտրութենէ սուրբ հոգւոյն և բազմաց վկայութեամբ եպիսկոպոս ձեռնադրի մեծաշուք ուխտին Սկևռայի, մերձ նախասացեալ դղեկին Լամբրոնի, որ աստուածային շնորհիւն զանձն աւրինակ տայր, որոց և հոգուէրն և գործով, քան թէ բանիւ, խրատէր զհաւատացեալ իւր հաւտն և ի փառս Աստուծոյ տուողին ուղղէր զնոսա»[40]: Երկարակյաց է եղել Գրիգորը և ապրել է մինչև Գևորգի տասնութ տարեկան հասակը: «Եւ յայս հանդէս յութուտասն ամ սրբոյս ի ստադին կալով զԲելիար ընկճէր և ամբարձմամբ ձեռին և սրբութեամբ սրտին զԱմաղէկ պարտէր և զգայունքն իւր արթուն և զուարթուն հանդիսադրին առաջի կացուցանէր: Մաշէր, գերէր և յաւարի առեալ կապուտ և կողոպուտ ի հիմանց զիշխանն աշխարհիս քակտէր և ամենայն ուստեք առաքինական ճոխութեամբն աճէր և զաւրութենէ ի զաւրութիւն գնալովն՝ զԱստուած փառաւորէր: Եւ յայսմ վայրի կատարումն եհաս եպիսկոպոսն, որ քեռի էր սրբոյս»[41]:

Անհրաժեշտ է ամենից առաջ ճշտել Գևորգ Սկևռացու ծննդյան թվականը:

---

[38] Բաղդասարյան Էդ., Գևորգ Սկևռացու վարքը, Բանբեր Մատենադարանի, 1964, N 7, էջ 398: Գրիգոր Սկևռացու կենսագրական շատ փաստերի պարզաբանման և լուսաբանման գործում մեծ դեր ունի Էդ. Բաղդասարյանի հրատարակած «Գևորգ Սկևռացու վարքը» բնագիրը, որին հեղինակը կցել է ծավալուն առաջաբան և ծանոթագրություններ:

[39] Նույն տեղում, էջ 413:

[40] Նույն տեղում, էջ 413-414:

[41] Նույն տեղում, էջ 414-415:

Դա ոչ ուղղակի ձևով անում է վարքագիրը: Նա գրում է, որ Լամբրոն եկած Առաքելն ու Մլքեն, որոնք բավականին առաջացած տարիքում էին, Հեթում Ա-ի գահակալման քսաներորդ տարում արու զավակ ունեցան, որին անվանակոչեցին Գևորգ:

Հայտնի է, որ Հեթում Ա-ն գահ է բարձրացել 1226 թվականին՝ հիմք դնելով Հեթումյանների արքայատոհմին: Հեթում արքայի գահակալման քսաներորդ տարին 1246 թվականն է: Ուրեմն Գևորգը ծնվել է 1246 կամ 1247 թվականին[42]: Ճշտելով Գևորգի ծննդյան թվականը՝ ճշտում ենք նաև Գրիգոր Սկևռացու՝ եպիսկոպոս ձեռնադրվելու և մահվան ստույգ թվականները: Այսպես, Գևորգի հինգ տարեկան հասակը համապատասխանում է 1251 կամ 1252 թվականին, այս թվականին նա ուսանում էր մորեղբոր մոտ: Իսկ 1256 կամ 1257 թվականին, երբ Գևորգը տասը տարեկան էր, Գրիգորը ձեռնադրվում է եպիսկոպոս: Գևորգի տասնութ տարեկան հասակում, այսինքն՝ 1264 կամ 1265 թվականին, մահանում է Գրիգոր Սկևռացին: Ուրեմն Գրիգորի մահվան ստույգ թվականն է 1264 կամ 1265: Մորեղբոր մահը ծանր հարված է եղել Գևորգի համար: Վերջինս 1267 թվականին իր օրինակած «Տոնապատճառի» (ՄՄ ձեռ. 3082) հիշատակարանում թողել է քեռուն նվիրված, աքրոստիքոսով գրված մի ողբ, որի տների սկզբնատողերը կազմում են «Գևորգ պատանին գրեաց», իսկ վերջնատառերը կապում են «Գրիգորի վարդապետին»:

Ունենալով Գրիգոր Սկևռացու՝ եպիսկոպոս ձեռնադրվելու և մահվան ստույգ թվականները, ինչպես նաև կենսագրական որոշ տվյալներ՝ փորձենք որոշել նրա ծննդյան մոտավոր թվականը:

Այսպես:

Ստույգ է, որ «Արեգականն արդարութեան» շարականը գրվել է 1198 թվականին և մեզ է հասել անխաթար ձևով[43]: Այս թվից հետո Գրիգորը ապրել է ևս 66 տարի: Լևոն Բ արքայի կողմից շատ սիրված ու գնահատված անձնավորություն էր Գրիգորը. նա թագավորի ատենադպիրն էր, խորհրդատուն և խոստովանահայրը: 1203 թվականին արքայի պատվերով հունարենից հայերեն է թարգմանել Նիկիայի Վահան կամ Հովհաննես արքեպիսկոպոսի թուղթը՝ ուղղված հայոց Զաքարիա Զագեցի կաթողիկոսին[44]: Ենթադրում ենք, որ 1203 թվականին Գրիգորը արդեն Լևոն արքայի պալատում էր, ուր նրան վստահված էր բավական լուրջ մի աշխատանք: Նման լուրջ պաշտոնի համար պետք է, որ Գրիգորը տարիքով ու ունակություններով հասուն լիներ, իսկ շարական գրելու համար՝ ծանոթ լիներ շարականագրության կանոններին և ունենար գիտելիք-

[42] Նույն տեղում, էջ 405:

[43] Ալիշան Ղ., Սիսուան, էջ 101:

[44] Նույն տեղում:

ների որոշակի պաշար։ Եթե ընդունենք, որ շարականը գրվել է ոչ վաղ, քան Գրիգորի 20-25 տարեկան հասակը, իսկ ատենադպրի պաշտոնում լինելու համար առնվազն պետք է լիներ 30 տարեկան, հավանական ենք համարում, որ նա ծնված կարող է լինել ԺԲ դարի վերջին քառորդին՝ 1170-1178 թվականների միջև։ Այդ թվականը մոտ է Գ. Հակոբյանի առաջադրած թվականին՝ 1170-1175։

Գրիգոր վարդապետ Սկևռացին ծնվել է Կիլիկիայի Լամբրոն ավանում, կրթություն է ստացել Սկևռայի նշանավոր վանական դպրոցում։ Եղել է Ներսես Լամբրոնացու աշակերտն ու հետևորդը իր հասարակական-քաղաքական և գրական գործունեության մեջ։ 1204 թվականին՝ ուսուցչի մահից հետո, նրա հիշատակին մի գեղեցիկ ներբող է գրել՝ «Սրբոյ վարդապետին Գրիգորի ներբողեան պատմագրաբար ասացեալ ի վարս մեծի քահանայապետին սրբոյն Ներսիսի արհիեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ ի խնդրոյ նորին համանուն և համազգւոյ Ներսիսի քահանայի» վերնագրով։ Գրիգորը շատ մտերիմ է եղել Լամբրոնի դղյակատեր Կոստանդին իշխանի հետ և նրա խնդրանքով գրել է ճառեր[45]։

1219 թվականի մայիսի 2-ին՝ հինգշաբթի օրը, վախճանվում է Լևոն Բ թագավորը՝ Գրիգոր վարդապետ Սկևռացուց ստանալով վերջին հոգևոր հաղորդությունը[46]։

Հովհաննես Սսեցի (1203-1220) կաթողիկոսի մահվանից մեկ տարի հետո՝ 1221 թվականին, Գրիգոր Սկևռացին Կոստանդին Լամբրոնացի իշխանի կողմից որպես կաթողիկոսության թեկնածու է ներկայացվում Կոստանդին Բարձրբերդցու հետ պայքարում։ Վերջինիս թեկնածությունը առաջադրել էր Կոստանդին Պայլը։ Կաթողիկոսության պայքարում հաղթում է Կոստանդին Բարձրբերդցին (1221-1267) և քառասունվեց տարի հովվապետում մեր ժողովրդին[47]։

Գրիգորը եղել է Սկևռա վանքի առաջնորդ և Տարսոնի եպիսկոպոս։ Նա էլ Ներսես Լամբրոնացու նման մտահոգ է եղել մենաստանի բարգավաճման հարցերով և որպես հոգևոր հովիվ և մատենագիր՝ օրինակ է ծառայել ոչ միայն Սկևռայի, այլև Կիլիկիայի շատ վանքերի միաբանների համար։ Նա Սկևռայի գրչության կենտրոնի նշանավոր վարդապետներից էր։ Ունեցել է բազմաթիվ աշակերտներ և հետևորդներ, որոնցից առավել նշանավոր էր Գևորգ Սկևռացին (1246-1301)։

Գրիգոր Սկևռացու սոցիալական ծագման մասին ոչինչ հայտնի չէ։ Հավանական ենք համարում, որ նա կարող էր սերված լինել Օշինյան հայտնի

[45] Տաշեան Հ., Ցուցակ հայերէն ձեռագրաց..., էջ 475։

[46] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, մաս Գ, էջ 1598։

[47] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, մաս Ա, էջ 1601։

տոհմից։ Սա հավանական է թվում մանավանդ այն պատճառով, որ Սկևռան եղել է Օշինյանների «սեփական անապատը», և, որպես կանոն, վանքի առաջնորդներն էլ ժառանգաբար եղել են այդ տոհմից։

Գրիգոր վարդապետ Սկևռացին մահացել է 1264 կամ 1265 թվականին, նրա աճյունը հանգչում է Սկևռա վանքի դամբարանում՝ վանքի մյուս առաջնորդների և միաբանների շիրիմների կողքին։

Ամփոփելով կարող ենք ասել, որ միջնադարյան նշանավոր մատենագիր, քաղաքական-հասարակական գործիչ Գրիգոր Սկևռացու ծննդյան թվականը մոտավորապես հայտնի է։ Ենթադրվում է, որ նա ծնվել է ԺԲ դարի վերջին քառորդին՝ հավանաբար 1170-1178 թվականների ընթացքում, Կիլիկիայի Լամբրոն ավանում։ Ծննդավայրի անունով կոչվել է նաև Լամբրոնացի։ Կրթությունը ստացել է Սկևռա վանքի դպրոցում, եղել է վանքի հիմնադիր և առաջնորդ Ներսես Լամբրոնացու աշակերտը, հետևել նրան իր գրական, հասարակական և քաղաքական գործունեության մեջ՝ հետագայում դառնալով նույն վանքի առաջնորդը, պատվել գիտնական վարդապետ կոչումով։ Եղել է Լևոն Բ-ի խորհրդատուն, թարգմանիչն ու խոստովանահայրը։

1219 թվականի մայիսի 2-ին թագավորին մահվան ժամանակ տվել է վերջին հոգևոր հաղորդությունը։

1221 թվականին եղել է կաթողիկոսության աթոռի թեկնածուներից։

1256 թվականին օծվել է եպիսկոպոս։

Առաջին թվակիր երկը «Արեգական արդարութեան» շարականն է՝ գրված 1198 թվականին։ 1203 թվականին Լևոն Բ-ի պատվերով թարգմանել է Նիկիայի Վահան կամ Հովհաննես արքեպիսկոպոսի թուղթը՝ ուղղված հայոց Զաքարիա Ձագեցի կաթողիկոսին։ 1204 թվականին գրել է Ներսես Լամբրոնացուն նվիրված ներբողը։ 1220-1250 թվականների ընթացքում գրել է ճառեր։ Քարոզների, Աստվածածնին նվիրված ներբողի, Խրատի, աղոթքների, մեկնությունների գրության թվականները հայտնի չեն։

Գրիգոր Սկևռացին մահացել է 1264 կամ 1265 թվականին և թաղվել Սկևռա վանքի դամբարանում։

Тамара Минасян

УТОЧНЕНИЯ БИОГРАФИЧЕСКИХ ДАННЫХ ГРИГОРА СКЕВРАЦИ

Резюме

***Ключевые слова**: Григор архимандрит Скевраци, Геворк Скевраци, личности авторов, Григор Мличеци, Левон II, Гетум I, грамматик, биографические сведения*

Писатель, общественный, политический и церковный деятель XIII века архимандрит Григор Скевраци один из тех авторов, изучение жизни и деятельности которого ставит нас перед такими сложными средневековыми проблемами, каковыми являются вопросы личности одноименных авторов, их эпоха, авторской принадлежности дошедших до нас произведений под одинаковым заглавием.

В арменоведении по сей день существуют разногласия в вопросах литературного наследия Григора Скевраци. Его произведения были приписаны Григору Нарекаци, Григорам Старшему и Младшему Мартирофилам и Григору Мличеци. Соответственно были перепутаны и некоторые биографические данные. Обращение к авторской принадлежности трудов Григора Скевраци не входит в круг вопросов нашего материала. В статье обсуждаются лишь несколько спорных эпизодов, связанные с его биографией.

Литературная, общественная и духовная деятельность Григора Скевраци совпадает с периодом царствования Левона II и Гетума I. Григор Скевраци был начальником канцелярии и советником царя Левона II, предводителем монастыря Скевры и духовным пастырем области Тарон. Имея в виду большой авторитет, которым пользовался Скевраци при жизни, надо сказать, что биографические сведения, сохранившееся о нем, крайне скудны. Григор не написал автобиографии и никто из современников не передал хотя бы его краткое житие. О датах рождения и смерти Григора Скевраци были разные мнения. Датой его рождения считали 1150 г. или 1170-1175 гг., а датой смерти – либо неизвестной, либо 1230 г.

До нас дошло житие известного грамматика и общественного деятеля XIII века Геворка Скевраци, племянника Григора Скевраци. Оно является самым достоверным и пока единственным и ценным историческим источником, и некоторые неизвестные стороны биографии Григора Скевраци дополняются, уточняются и подтверждаются этим источником. Из жития Геворка выявляется примерная дата рождения Григора – можно предположить, что он родился в последней четверти XII века, вероятно в 1170-1178 гг., и точно выясняются дата его возведения в сан епископа (1256/1257 гг.) и дата смерти (1264/1265 гг.).

Tamara Minasyan

PRECISING THE BIOGRAPHICAL DATA OF GRIGOR SKEVRATSY

Summary

Key words: *Grigor archimandrite Skevratsi, Gevork Skevratsi, personality of authors, Grigor Mlichetsi, Levon II, Hetum I, grammarian, biographical information*

Archimandrite Grigor Skevratsi, a writer, public, political, and Church figure of the 13th century, is one of those authors whose study of life and work confronts us with complex medieval problems, such as questions of the personality of authors bearing the same name, their era and the authorship of works that have come down to us under the same title.

To this day, there are disagreements in Armenian studies on the literary heritage of Grigor Skevratsi. His works were attributed to Grigor Narekatsi, the Elder and the Younger Grigor Martyrophil and Grigor Mlichetsi. Accordingly, some biographical data were mixed up. The issue of the authorship of Grigor Skevratsi's works is not included in the circle of questions of our material. The article discusses only several controversial episodes related to his biography.

The literary, social and spiritual activity of Grigor Skevratsi coincides with the reign of Levon II and Hetum I. Grigor Skevratsi was the head of the chancellery and the adviser of King Levon II, the prior of the monastery of Skevra and the spiritual pastor of the Taron province. Bearing in mind the great authority that Skevratsi enjoyed during his lifetime, it should be noted that the biographical information preserved about him is extremely scarce. Grigor did not write an autobiography, and none of his contemporaries transmitted at least the brief history of his life. There were different opinions about the dates of birth and death of Grigor Skevratsi. The date of his birth was considered to be 1150 or 1170-1175, and the date of death was supposed either unknown or 1230.

The Life of Gevork Skevratsi, a famous grammarian and public figure of the 13th century, the nephew of Grigor Skevratsi, has come down to us. It is the most reliable and so far the only and valuable historical source and some unknown sides of the biography of Grigor Skevratsi are supplemented, precised and confirmed by this source. The approximate date of birth of Grigor is revealed from the Life of Gevork: it can be assumed that he was born in the last quarter of the 12th century, probably in 1170-1178, and the dates of his ordination as bishop (1256/1257) and of his death (1264/1265) can be précised.